ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ԵՐԵՎԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0047,
Նորք, Ա.Արմենակյան փողոց, 108/4
Հեռախոս՝ (+37410) 650971, 650961
Ֆաքս՝ (+37410) 653809
Էլ.փոստ՝ norkmarashmc@gmail.com

"Nork-Marash" Medical Center
Armenakyan str. 108/4, Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 650971, 650961
Fax: (+37410) 653809
E-mail: norkmarashmc@gmail.com

Медицинский Центр «Норк-Мараш»
РА, Ереван, 0047, ул. А.Арменакяна 108/4
Телефон: (+37410) 650971, 650961
Факс: (+37410) 653809
Эл.почта: norkmarashmc@gmail.com

Ք. Երևան «21» փետրվարի 2025թ.

Որոշում
<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն ՓԲԸ տնօրենի
Թիվ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/24
(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

<<Նորք-Մարաշ> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն(այսուհետև նաև՝ Պատվիրատու) բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 02.12.2024 թվականին գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել է <<ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/24>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև <<Վի Քեյ Ինջինեիրինգ>> ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) թիվ 2 նիստի արձանագրությամբ կայացվել է տարբեր չափաբաժիններով, այդ թվում նաև 89-րդ, Մասնակցին <<ընտրված մասնակից>> հայտարարելու որոշում:

Պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակվել է տեղեկագրում 15.01.2025 թվականին:

Անգործության ժամանակահատվածի ավարտից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ 03.02.2025 թվականին Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու ծանուցումը և պայմանագրի նախագիծը:

Սահմանված 5-օրյա ժամկետում Մասնակիցը չի կնքել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները 89-րդ չափաբաժնի մասով: Արդյունքում Մասնակիցը զրկվել է տվյալ չափաբաժնով պայմանագիր կնքելու իրավունքից:

Հանձնաժողովի թիվ 3 արտահերթ նիստի որոշմամբ 89-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած և դրա մասին հայտարարությունը 11.02.2025 թվականին հրապարակվել է տեղեկագրում՝ www.gnumner.minfin.am կայքում:

«Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի **6-րդ ենթակետի «բ» պարբերության** համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ **որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից**:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված **որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու** կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու **օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում**: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական

քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակցի հրաժարվել է կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
<<Վի Քեյ Ինջինեիրինգ>> ՍՊԸ	04244711	ք. Երևան, Նոր Խարբերդ 1փ. 1 նրբ, 30/5տ	-	-	Որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	21.02.2025թ. ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/24

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «բ» պարբերությամբ և նույն հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇԵՑ

<<Վի Քեյ Ինջինեիրինգ>> ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու /2/ տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, վերջինիս տվյալները սույն որոշման կայացման հաջորդող օրը ներկայացնել լիազոր պետական մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ